

Ստորագրեալներս, նկատի ունենալով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ներկայ պառակտեալ անմիջիմառ վիճակը և նկատի ունենալով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Յ. Վազգէն Ա. Վ. վերջին թիւ 171 սրբատառ Կոնդակը, որոնք մէջ Վեհափառ Հայրապետը բռնէ բաղձանք մը կը յայտնէր վերահաստատելու մեր դարաւոր Եկեղեցիին խախտած ներքին աւ դորրութիւնը, անհատապէս՝ որոշեցինք երթալ Անթիլիաս, Լիբանան, անձնական տեսակցութիւններ տեսնելու համար տեղւոյն վրայ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին Միաբանութեան անդամներուն, տեղւոյն Հայ Կուսակցութիւններու ներկայացուցիչներուն և ծանօթ ազգայիններուն հետ, սառուգելու համար թէ ի՞նչ կարելիութիւններ կային բաղձացուած միութիւնը և համերաշխութիւնը վերահաստատելու համար մեր Եկեղեցիէն ներս:

Արեւմտեան, մեր Պէյրութ տաղավանի գլխաւոր և միակ նպատակն այս էր, անպաշտօն հանգումանքով և զուտ մեր անհատական նախածինութեամբ:

Դուրս Դին հասանք Լիբանան:

Ի մերոյ 12 օր մնացինք Պէյրութ: Մեր բովանդակ ժամանակը յատկացուցինք բազմաթիւ տեսակցութիւններու: Մեր տեսակցութիւններս բնիկացիքն, անդրադարձանք այն բոլոր կէտերուն շուրջ, որոնք տարակարծութիւններու աղբիւրը կը հանդիսանային: Լուսարանցիքն ըստ կարելւոյն և, լուսարանուեցանք ու մեր վերջնական եզրակացութիւնն այն եղաւ, թէ՛ տակաւին միութեան և համերաշխութեան գաղափարը հարկ եղածին չափ չէ հասունցած:

Կիլիկիան Աթոռին Իշխանութեանց կողմէ մեզի բնծայուեցաւ ամէն յարգանք և գիւրում թիւն, որ մօտեւաւոր գոհունակութեամբ կը յիշենք:

Պէտք է ըսենք, թէ ստորագրեալներս յուսախար վերադարձանք մեր անպաշտօն առաքելութենէն: Մեզի այնպէս կը թուէր, թէ մեր դարաւոր ու պատուական Եկեղեցւոյ բարեքին համար զոհողութիւններ բնիկ աւարամարդութիւնն ու ոգին տակաւին կը պակսի մօտեւ մօտ, որոնք հիմնականէն աւելի այլ մտահոգութիւններով կ'առաջնորդուին:

Ստորագրեալներս խորապէս համոզուած ենք, որ մեր գաղութներու ներկայ վիճակը կրնայ խաղաղիլ և իր բնական կացութեան վերադառնալ, եթէ օր առաջ լուծուած մը գտնէ չայց. Առաքելական Եկեղեցւոյ տաղանալը: Մեր կարծիքով, այդ տաղանալին պատճառները անլուծելի չեն: Բաղձալի է որ այդ լուծումը օր առաջ իրականանայ, սուրբութիւն պտտանալով համայն հայութեան և վերադարձնելով հայ կեանքին մէջ սիրոյ և համերաշխութեան ոգին, յօգուտ մեր բոլորին և մեր ազգային և կրօնական հաստատութիւններուն:

Իրեւ վերջին նկատողութիւն, ցաւով կ'ուզենք նշել իսկ, որ զուտ կրօնական հարցի մը լուծումը այսօր ենթարկուած է քաղաքական մտայնութիւններու ազդեցութեան, որ իր տեղը ունենալու չէ Եկեղեցական գործերու մէջ:

ՀԱՅԳ ԳԱՎՈՒԾԵԱՆ

ՋՈՐ. ՍԱՐԳԻՍ Ս. ՋՈՐԴՆԱՐԵԱՆ

ՏԱՏԱՌԻ ՏԱՏԱՌԵԱՆ

Նիւ Եօք, Ն. Ե. . Յուլիս 29, 1900

تصيرها - بطريكة الارمن الارثوذكس المزمع والمحرر السورل - صاحب النياق الاسقف باكازون أبراهيان
سبتمبر ١٩٦٠ طبع في مطبعة دير الارمن - القسوس المند ٩

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.